ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.pashtpan.am

№ _____

«___» _____ 2016թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ԼՈՔՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Լոքյան,

Ի պատասխան Ձեր՝ 2015 թվականի փետրվարի 19-ի թիվ 1/06.3/2131-16 գրության՝ ստորև ներկայացնում եմ ««Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ նկատառումները.

Նախագծով առաջարկվում է «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքից հանել այն կարգավորումները, որոնք առնչվում են ՀՀ Նախագահին վերապահված քաղաքական ապաստան տալու իրավասությանը: Մասնավորապես, Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ նշվում է, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի Սահմանադրական փոփոխություններով պայմանավորված ՀՀ Նախագահը չունի օրենքով սահմանված կարգով քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերի լուծման լիազորություն (Գլուխ 5), և քաղաքական ապաստան ստանալը սահմանված է որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը (Հոդված 54), ինչի կապակցությամբ անհրաժեշտ է «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ: Միաժամանակ, Նախագծի 7-րդ հոդվածը սահմանում է, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Իրականում, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 209-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 5-րդ գլուխն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Մինչ այդ շարունակում են գործել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները: Հատկանշական է, որ ըստ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 55-րդ հոդվածի 15-րդ մասի՝

Իրավական վերլուծության վարչություն
Հեռ.՝ 53-76-34

Հանրապետության Նախագահն օրենքով սահմանված կարգով լուծում է ՀՀ քաղաքացիության և քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ իրավական ակտը կարող է պարունակել անցումային դրույթներ, եթե իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ եթե որոշակի ժամկետների համար անհրաժեշտ է սահմանել իրավական ակտի հիմնական նորմերից տարբերվող այլ նորմեր:

Հաշվի առնելով մեջբերված իրավական կարգավորումները՝ առաջարկում ենք Նախագծում նախատեսել անցումային դրույթներ, որոնց համաձայն Նախագծի այն կարգավորումները, որոնք վերաբերում են ՀՀ Նախագահի՝ քաղաքական ապաստան տալու հետ կապված լիազորությունը միգրացիայի հարցերով լիազոր պետական մարմնին վերապահելուն, ուժի մեջ կմտնեն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 5-րդ գլխի ուժի մեջ մտնելու օրը:

Հարգանքով

Ա. ԹԱԹՈՅԱՆ

Իրավական վերլուծության վարչություն
Հեռ.՝ 53-76-34